




**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ ԿԱԶԳԵՆ ԳԱԼԹԱՔՃՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՎԱԶԳԷՆ ԳԱԼԹԱՔՃԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՒԻԶԻԱՆԱ, ԱՄՆ**

ԱՄՆ Արեւելեան թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ մայիսի 13-14-ին պիտի կատարուի օրհնութիւնն ու օծումը Լուիզիանա նահանգի Պաթոն Ռուժ քաղաքի Սուրբ Կարապետ եկեղեցու, որի բարգաւաճմանն ի խնդիր Դուք գովելի ներդրում էք բերել աստուածասէր եւ եկեղեցանուէր ազնիւ ոգով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցոյ նուիրեալ եւ արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնը, գնահատանքն ու բարեմաղթանքները:

Գոհունակութիւն է Մեզ համար, որ 1700-ամեայ մեր Եկեղեցու տերունապատուէր առաքելութիւնը նոր հազարամեակին նշանաւորուում է հաւատաշէն իրագործումներով, այլեւ Մեր բարերար զաւակաց սրտաբուխ նուիրատուութիւններով կեանքի կոչուած եկեղեցաշինական ծաւալուն աշխատանքներով Մայր Հայրենիքում եւ Սփիւոքի մեր գաղթօջախներում: Դարեր շարունակ մեր ժողովրդի զաւակները եկեղեցիներ են կառուցել, որոնց օրհնեալ յարկերի ներքոյ աղօթական հոգով միաւորուում է մեր ժողովուրդը, ապրում Քրիստոսի կենդանի ներկայութիւնը, հաղորդ դառնում աստուածային կենարար շնորհներին: Եւ այսօր Դուք սատար էք կանգնել եկեղեցա-

շինության եւ հայոց մեր հաւատքի լոյսը մշտավառ պահելու նուիրական գործին՝ զգալի ներդրում բերելով ամերիկահայ կեանքի բարգաւաճմանը:

Ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր սերն առ Աստուած եւ Եկեղեցին եւ ծառայասիրութեան ու զոհողութեան ոգին, որով զօրացեալ բարի գործերով էք զարդարում ընթացքը Ձեր կեանքի, զօրեղ են նաեւ Ձեր հարազատների հոգիներում: Ձեր բարի օրինակով նաեւ Ձեր եղբայրների եւ քրոջ բարեպաշտ ընտանիքները առատաձեռն նուիրատուութիւններով աջակցում եւ օժանդակում են ծուխի զարգացմանն ու բարօրութեանը:

Սիրելի Տիար Գալթաքճեան, Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով՝ գոհունակ հոգով ընդառաջում ենք բարեջան Ձեր Առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մենք հաւատում ենք, որ նոյն գովարժան փութաջանութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր ազգասէր գործունեութիւնն ու եկեղեցանուէր ծառայութիւնները՝ նպաստելով հայորդեաց մէջ հաւատը եւ մեր սրբազան արժէքների նկատմամբ նախանձախնդրութիւնը հաստատուն պահելու նուիրական գործին:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ պսակի Ձեր բոլոր բարի եւ առաքինի ձեռնարկումները մշտակայ յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Ապրիլի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 344